# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-15) 566072

« 19 » դեկտեմբերի 2024 թ.

№ ՄՇ/34.2-Մ2-9/5952-2024

***Անհատ ձեռնարկատեր***
***Սիմոն Իշխանի Սարգսյանին***

Հարգելի պարոն Սարգսյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2024 թվականի դեկտեմբերի 9-ի և 18-ի գրություններով (պատճենները կցվում են) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին տեղեկացրել է Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի №3/6 հասցեում գործող «Վոյաժ» հյուրանոցում (գործունեություն իրականացնող անձ՝ անհատ ձեռնարկատեր Սիմոն Իշխանի Սարգսյան) հայտնաբերված՝ առանց թույլտվության 1950-1965ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում շահագործվող բջջային կապի վերահաղորդակի մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 60-րդ հոդվածը՝ հանձնաժողովը նախատեսում է քննարկել Ձեր կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու հարցը:

Անհրաժեշտ է 7-օրյա ժամկետում ներկայացնել նշված հարցի կապակցությամբ Ձեր պարզաբանումները:

Առդիր՝ 10 էջ:

***Ս. Շահինյան***

12/20/2024

X

ՍԵԴԱ ՇԱՀԻՆՅԱՆ

**Կատարող՝ Ս. Ղարախանյան** 015 58 08 08 (124)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐ**

**N 01/11.1/10209-2024**

«…..»………………..2024թ.

**ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ**

***Հարգելի՛ պարոն Մեսրոպյան***,

Ի լրումն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2024 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 01/11./9851-2024 գրության, տեղեկացնում եմ, որ սույն թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» (այսուհետ՝ «ՀՀԿ») ՊՈԱԿ-ի մասնագետները Երևան քաղաք, Մաշտոցի պողոտա 8/7 հասցեում տեղակայված «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) շարժական բջջային կապի «YE113» բազային կայանի մոտակայքում իրականացրել են 1950-1965 ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումներ և ուղղորդման աշխատանքներ:

Արդյունքում, Երևան քաղաքի Մաշտոցի 3/6 հասցեում գործող «Վոյաժ» հյուրանոցում տեղադրված և շահագործվող բջջային կապի վերահաղորդակից արձանագրվել են կողմնակի ազդանշաններ:

Վերահաղորդակն անջատելուց հետո, Ընկերության կողմից «ՀՀԿ» ՊՈԱԿ-ին բանավոր ներկայացված տեղեկատվության համաձայն՝ բջջային կապի «YE113» բազային կայանում խանգարումները վերացել են: Վերահաղորդակի շահագործման անթույլատրելիության մասին կազմվել է համապատասխան արձանագրություն: Սակայն վերահաղորդակի շահագործողը հրաժարվել է ստորագրել:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590001, էլ. փոստ՝ minister@hti.am

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ «ՀՀԿ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից Երևան քաղաքի Արգիշտի փողոց 4/1 հասցեում տեղակայված Ընկերության շարժական բջջային կապի բազային կայանի աշխատանքը խաթարող ռադիոճառագայթման աղբյուրների հայտնաբերման և տեղորոշման աշխատանքները շարունակվում են:

Կից ներկայացվում են սպեկտրագրամանների և արձանագրության պատճենները:

Առդիր՝ 3 թերթ:

12/9/2024

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047 **ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Կատարող՝ կապի և փոստի վարչության կապի բաժին
Լուսինե Հակոբյան հեռ՝ 010 59 00 65

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

Պարոն՝ «Զոլակ» կոոպերատիվի ղեկավարին

«04» 12 2024 թ. ՀՀԿ ՊՌԱԿ ներկայացուցիչների կողմից կատարվել է հետազոտում, որի արդյունքներից պարզվել է հետևյալը Մաշտոցի պողոտա 3/6 հասցեում Ձեր կողմից շահագործվող բջջային կապի համար նախատեսված ուժեղարարի սարքը խանգարումներ է առաջացնում «UCOM» ՓԲԸ-ի բջջային կապի համար հատկացված 1950-1965 ՄՀց հաճախականությունների տիրույթում։

Սարքի հետագա շահագործումը արգելվում է։

(կազմողների Ա. Ա.) (ստորագրություն)

Ռ. Մանուկյան

Ռ. Հարությունյան

Արձանագրության հետ ծանոթացա և ստացա՝ ______________________

(պաշտոնը, Ա.Ա., ստորագրություն)

«04» 12 2024թ.

---


## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

Պարոն՝ «Զոլակ» կոոպերատիվի ղեկավարին

«04» 12 2024 թ. ՀՀԿ ՊՌԱԿ ներկայացուցիչների կողմից կատարվել է հետազոտում, որի արդյունքներից պարզվել է հետևյալը Մաշտոցի պողոտա 3/6 հասցեում Ձեր կողմից շահագործվող բջջային կապի համար նախատեսված ուժեղարարի սարքը խանգարումներ է առաջացնում «UCOM» ՓԲԸ-ի բջջային կապի համար հատկացված 1950-1965 ՄՀց հաճախականությունների տիրույթում։

Սարքի հետագա շահագործումը արգելվում է։

(կազմողների Ա. Ա.) (ստորագրություն)

Ռ. Մանուկյան

Ռ. Հարությունյան

Արձանագրության հետ ծանոթացա և ստացա՝ ______________________

(պաշտոնը, Ա.Ա., ստորագրություն)

«04» 12 2024թ.




Ք. Երևան, Մաշտոցի պողոտա 3/6 հասցեում տեղադրված վերահաղորդիչ սարքի աշխատանքը

ROHDE&SCHWARZ PR200

Date: 2024-12-04 11:43:27




Ք. Երևան, Մաշտոցի պողոտա 3/6, վերահաղորդիչ սարքը անջատված

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐ**

N 01/11.1/10584-2024

«.....» ............... 2024թ.

**ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Մեսրոպյան**,

Ի պատասխան Ձեր 2024 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ ՄՄ/34.2-Մ2-9/5771-2024 գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից հարցումներ են ուղարկվել ՀՀ կադաստրի կոմիտե և ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ համապատասխանաբար Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի 3/6 հասցեում «Վոյաժ» հյուրանոցի նկատմամբ իրավունքի պետական գրանցման առկայությունը, ինչպես նաև գործունեություն իրականացնող իրավաբանական անձի վերաբերյալ առկա տեղեկատվությունը ճշտելու նպատակով:

Հարցումների պատասխանների պատճենները կցվում են:

Առդիր՝ 3 թերթ:

12/18/2024

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047 **ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Կատարող՝ կապի և փոստի վարչության կապի բաժին
Լուսինե Հակոբյան հեռ՝ 59 00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N ՄԽ/21357-2024 «___»____________ 202__ թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Դավիթ Գասպարյանին

Հարգելի՛ պարոն Գասպարյան,

Ի պատասխան Ձեր 2024 թվականի դեկտեմբերի 11-ի N 07/11.1/10381-2024 գրության՝ հայտնում ենք, որ ըստ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային արխիվի տվյալների՝ քաղաք Երևան, Կենտրոն, Մաշտոցի պողոտա, N 3/6 տարածք հասցեի անշարժ գույքի միավորի նկատմամբ գրանցված է քաղաքացիներ Երջանիկ Սիմոնի Սարգսյանի (անձնագիր՝ AE 0645673, ծնված 16.03.1977 թ.) և Սյուզաննա Արմենի Ավագյանի (անձնագիր՝ AM 0278211, ծնված 28.07.1986 թ.) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը (վկայական N 05112019-01-0085):

Հայտնում ենք նաև, որ վերոնշյալ հասցեում գտնվող 97.63 քմ մակերեսով տարածքի նկատմամբ գրանցված է ԱՁ Սիմոն Իշխանի Սարգսյանի (ՀՎՀՀ՝ 30918886, անձնագիր՝ AN 0422251, ծնված 05.01.1950 թ.) անհատույց օգտագործման իրավունքը (վկայական N 25012017-01-0075):

Invalid signature

X

ՄՀԵՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: KHACHATRYAN MHER 4108790022 Մհեր Խաչատրյան

Կատարող՝ Ս. Ղազարյան
Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն
Հեռ.՝ 060-474226

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

«____» _______________ 20 թ.

No ________________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան 13.12.2024թ-ի թիվ N 07/11.1/1382-2024 գրության

Հարգելի՛ պարոն Գասպարյան,

ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների կողմից կատարված այցի և ՊԵԿ տեղեկատվական բազայի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ք. Երևան Մաշտոցի 3/6 հասցեում փաստացի գործունեություն է իրականացնում անհատ ձեռնարկատեր Սիմոն Սարգսյանը (ՀՎՀՀ 30918886):

Առդիր «1» էլ. ֆայլ:

Invalid signature

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

# ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐԱՆ

ՀՎՀՀ 30918886 Ժամանակաշրջան 13.12.2024 - 13.12.2024 Դիտել

Հարկ վճարող ՍԻՄՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## Անձնագրային տվյալներ

Կարգավիճակ Գործող

Հարկման դաշտ

Պետ. ռեգիստրի գրանցման ամսաթիվը 07.06.2006

Պետ. ռեգիստրի գրանցման համարը 273.03203

Գործի համար 23085

Հաշվառման ՀՏ ՀՎՍԿ թիվ 3 բաժին

Իրավական տեսակը Ֆ Անձ

Իրավաբանական հասցե
ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Փ. 76/3 41

Գործունեության հասցեներ

| Մարզ | Համայնք | Բնակավայր | Փողոց | Շենք | Բնակ. | Հեռ. |
|---|---|---|---|---|---|---|
| ԵՐԵՎԱՆ | ԿԵՆՏՐՈՆ | ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ | ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Փ. | 76/3 | 41 | - |
| ԵՐԵՎԱՆ | | | Նալբանդյան | 110 | | 581542 |
| | | | | | | 091104144 |

Բանկային ռեկվիզիտներ

Գործունեության ոլորտներ

| Անվանում | Կշիռ |
|---|---|
| I55.10.1 Հյուրանոցների տրամադրման ծառայություններ | 100.0 |

Լիցենզավորվող ոլորտներ

Գործող ՀԴՄ-ների քանակ 2

Հարկային գրքերի քանակ 1

## Գործունեության մասին տեղեկություններ

## Երրորդ անձանցից տեղեկություններ

## Արդյունավետության ցուցանիշներ և գործակիցներ

Supported by Team Solutions CJSC 2021-2024.

E-mail: info@teamsolutions.am

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## Հարկ վճարողների հաշվառման վերաբերյալ

| ՀՎՀՀ | Հարկ վճարող | Կարգավիճակ | Պետ. ռեգիստրի գրանցման ամսաթիվը | Պետ. ռեգիստրի գրանցման համարը | Իրավական տեսակը | կարգավիճակի փոփոխման ամսաթիվը | Գործունեության հասցե | Իրավաբանական հասցե | Հիմնական գործունեության ոլորտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 30918886 | ՍԻՄՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ | Գործող | 12.06.2006 | 273.03203 | ԱՁ | - | ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ, Մաշտոցի, 3/6 | Երևան, Կենտրոն Հանրապետության փ. 76/3շ, 41 բն | 155.10.1 Հյուրանոցների տրամադրման ծառայություններ |

*Հարկ վճարողների գործունեության փաստացի հասցեների վերաբերյալ տեղեկատվությունը տեղեկատվական շտեմարանից հնարավոր է ստանալ, եթե տվյալ հասցեում առկա է եղել գրանցված «գործող» կարգավիճակ ունեցող հսկիչ դրամարկղային մեքենա:

YEREVAN
29 JAN 2025
ARMENIA

ARMENIA YEREVAN
30 JAN 2025

ARMENIA
23 DEC 2024

23.01.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ՄԾ/34.2-Մ2-9/5952-2024 պ/տ

| Յ | Յասուղթ... |
|---|---|
| Ա | գանձված ... |
| Տ | Tax percu... |

YEREVAN
20 DEC 2024

L0125853994AM

ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ
RETURN CN15

- [ ] Անհայտ/ Unknown
- [ ] Տեղափոխված/ Gone away
- [ ] Բեր. հասցե/ Insufficient address
- [ ] Մերժված / Refused
- [x] Չի պահանջվել/ Unclaimed
- [ ]

վերադարձման ամսաթիվը / Return Date

Անհատ ձեռնարկատեր Սիմոն Իշխանի Սարգսյա...
Armenia ԵՐԵՎԱՆ, ԵՐԵՎԱՆ, ...

ARMENIA YEREVAN 3 0 JAN 2025 0002

ARMENIA YEREVAN 2 9 JAN 2025

ARMENIA YEREVAN 2 3 DEC 2024

Designated operator of origin

ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

| | |
|---|---|
| Առաքանու հասցեատեր/ Addressee of the item | Անհատ ձեռնարկատեր Սիմոն Իշխանի Սարգսյանին ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Մաշտոցի 3/6, «Վոյաժ» հյուրանոց |

Առաքանու բնույթը/Nature of the item

- ☐ Առաջնային նամակ/ Priority letter
- ☐ Հրատարակչություն/ Printed paper
- ☐ Ծանրոց/ Parcel
- ☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter
- ☐ Պատվիրված/Registered
- ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
- ☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO125853994AM

- ☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order
- ☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
- ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

**Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination**

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

- ☐ հանձնվել է/ delivered
- ☐ վճարվել է/ paid
- ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

**A.R.** Ծառայողական/ On postal service Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/ On postal service

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել /
Return to

| | |
|---|---|
| Անուն կամ գրասենյակի անվանում/ Name | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով |
| Փողոց և թիվ/ Street and No | ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002 |
| Բնակավայր և երկիր/ Locality and country | Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ |
| | |

AL0125853994AM

Հավելյալ Նշում 1՝ ՍՇ/34.2-Մ2-9/5952-2024 պ/տ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am